

## ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ



### 2006 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման մասին

«Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-28-Ն, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 4 փետրվարի 2004թ., թիվ 7 (306)) սահմանված ուղղությունների իրագործումն ապահովող միջոցառումները, «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 10 և 11 հոդվածներով սահմանված պահանջների համաձայն, արտացոլվել են «2006 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում», ինչը հաստատվել է ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի (այսուհետ՝ ՀՀ ՎՊԽ) կողմից և հրապարակվել (ՀՀ Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր (ԳՆԱՏ) թիվ 4<sup>1</sup>, 13 փետրվարի 2006թ.):

Հիմք ընդունելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրով սահմանված աշխատանքները (միջոցառումները), 2006թ. նախատեսված և իրականացման ենթակա աշխատանքների ընդհանուր ծավալը (հաշվի առած պարբերականությունը) կազմել է 1940 միավոր, որոնք ամբողջությամբ իրականացվել են:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրով նախատեսված միջոցառումները ֆինանսավորվել են ՀՀ պետական բյուջեից, ներառյալ՝ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված դրամաշնորհների միջոցները:

Ներկայացված բյուջետային հայտերի հիման վրա գանձապետական ֆինանսավորումը կատարվել է 100%-ով (697.8 միլիոն դրամ): Գրամաշնորհային միջոցներով իրականացված ծրագրերի ֆինանսական հոսքերի կառավարումն իրականացվել է դոնոր

կազմակերպությունների և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից:

2006 թվականի ընթացքում ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակվել են 79 անուն վիճակագրական հրապարակումներ (թղթային կրիչներով մոտ 12.5 հազար տպաքանակով), որոնք նաև տեղադրված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) բաց գրադարանում (գրադարանային ֆոնդը 01.01.2007թ. դրությամբ կազմել է 8210 միավոր) և զետեղված են 1999թ. ապրիլից գործող, ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջում:

Տեղեկատվության միջազգային փոխանակման շրջանակում 2006 թ-ին հրապարակման նպատակով էլեկտրոնային փոստով 220 պատասխան է ներկայացվել համապատասխան վիճակագրական կազմակերպություններին, որից ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեին՝ 167:

2006թ. ՀՀ ԱՎԾ են այցելել միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա ազգային վիճակագրական ծառայությունների 22 հանձնախմբեր և 30 փորձագետներ, իսկ, ընդհանուր առմամբ, միջազգային համագործակցության շրջանակում տեղի է ունեցել 169 հանդիպում: ՀՀ ԱՎԾ աշխատակիցները մասնակցել են արտասահմանյան 37 երկրում կազմակերպված վերապատրաստման և վիճակագրության բոլոր բնագավառներին առնչվող դասընթացների, աշխատանքային հանդիպումների, միջազգային համաժողովների, նստաշրջանների, սեմինարների և այլ միջոցառումների (այցեմասնակցությունների թիվը՝ 65):

Հայաստանում կազմակերպված նմանատիպ և միջգերատեսչական բնույթի ու այլ կազմակերպությունների մասնակցությամբ միջոցառումներին ՀՀ ԱՎԾ աշխատակիցների այցեմասնակցությունները կազմել են 274 միավոր:

2006թ-ին ՀՀ ՎՊԽ կողմից ընդունվել է 74 որոշում, որից 23 նորմատիվ: Նորմատիվ որոշումները ՀՀ արդարադատության նախարարության կողմից գրանցվել են և հրապարակվել ՀՀ ԳՆԱՏ-ներում:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում 2006թ. ընթացքում փաստաթղթաշրջանառության թվային պատկերը հետևյալն է.

1. Մտից թղթակցություն, ընդամենը - 5639 միավոր,
2. Ելից թղթակցություն, ընդամենը – 10705 միավոր:

X            X  
X

*«2006 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» կազմված է 2004-2006 թվականների Եռամյա ծրագրի հիման վրա: Եռամյա ծրագրով սահմանված ուղղությունները խարսխված են ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (15.04.1992թ.) և ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի (14.04.1994թ.) կողմից ընդունված՝ «Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներ»-ի և դրանց հիման վրա մշակված վիճակագրության միջազգային չափանիշների և ստանդարտների վրա: Պաշտոնական վիճակագրության միջազգային ստանդարտները և երկրների վիճակագրությունների՝ դրանց համապատասխանությունը վարում է Արժույթի միջազգային հիմնադրամը (այսուհետ՝ ԱՄՀ):*

*ԱՄՀ-ի Տվյալների տարածման հատուկ ստանդարտը (SSՀՄ) պարունակում է ստանդարտների մշտական պահպանման խիստ պահանջներ, ինչի վերաբերյալ տեղեկությունը հրապարակայնորեն առկա է ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում՝ <http://dsbb.imf.org/Applications/web/dsbbhome/> (ԱՄՀ SSՀՄ-ին Հայաստանն անդամագրվել է 2003թ.*

նոյեմբերի 7-ից): Ստանդարտների տարածման տեղեկագիրը ներառում է համապարփակ մեթոդաբանական փաստաթղթեր (մեթատվյալներ) անգլերեն լեզվով (հայերեն և ռուսերեն տարբերակներն առկա են ՀՀ ԱՎԾ ինտերնետային կայքում՝ <http://www.armstat.am/acm/Metadata/default.htm>) ՏՏՀՍ տվյալների կատեգորիաների մասով ՀՀ վիճակագրական փորձառության վերաբերյալ, ինչն արտացոլում են ՀՀ ԱՎԾ կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների ինտերնետային էջում ներառված երկրի արդիական տվյալները՝ <http://docs.armstat.am/nsdp/>:

## ՀՀ Վիճակագրության պետական խորհուրդ



### **«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2006թ. հունվար-դեկտեմբերին» տեղեկատվական ամսական զեկույց**

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2006թ. հունվար-դեկտեմբերին» տեղեկատվական ամսական զեկույցը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) 2006թ. վերաբերյալ առավել յուրաժամանակ (օպերատիվ) և ամբողջական վիճակագրական հրապարակումն է, որն արտացոլում է երկրի սոցիալ-տնտեսական վիճակը:

Չեկույցի բովանդակությունը ներկայացվում է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից մշակված Տվյալների տարածման ստանդարտներով սահմանված հատվածներին համապատասխան:

2006 թվականի արդյունքների օպերատիվ ամփոփված ցուցանիշներով.

- ՀՀ մշտական բնակչության թվաքանակը տարեվերջին կազմել է 3222.7 հազ. մարդ: Տարեկազմի նկատմամբ արձանագրվել է թվաքանակի 3.5 հազարով աճ: 2006թ-ին արձանագրվել է ծնելիության բացարձակ թվաքանակի աճ՝ 2006 թ-ին գրանցվել են 37568

ծնվածներ, 2005 թ-ի 37499 ծնվածների համեմատ, իսկ ծնելիության ընդհանուր գործակիցը 1000 բնակչի հաշվով, պահպանվել է նույն մակարդակի վրա՝ կազմելով 11.7 պրոմիլ: Մահացության ընդհանուր գործակիցն աճել է 0.2 պրոմիլային կետով (2006թ. մահվան 27149 դեպք, 2005 թ-ին արձանագրված 26379 դիմաց) և կազմել է 8.4 պրոմիլ: Գրանցվել է մայրական մահացության 10 դեպք 2005թ. 7 դեպքի դիմաց: Կյանքի առաջին տարում մանկական մահացության դեպքերը կազմել են 520 և 2005թ. համեմատ ավելացել 60-ով, իսկ մանկական մահացության գործակիցը կազմել է 13.8 պրոմիլ՝ 2005թ-ի 12.3 պրոմիլի համեմատ (1000 կենդանի ծնվածի հաշվով): 2006թ. գրանցված ամուսնությունների քանակը 2005թ.-ի համեմատ աճել է 1.6 %-ով և կազմել 16887, իսկ ամուսնալուծությունների քանակն աճել է 13.4 %-ով և կազմել 2796 (1000 ամուսնության դիմաց արձանագրվել է 166 ամուսնալուծություն):

- Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ցուցանիշը 2006թ-ին նախորդ տարվա նկատմամբ կազմել է 113.4%: 2006թ. ՀՆԱ-ն կազմել է 2665.0 մլրդ. դրամ (6.4 մլրդ ԱՄՆ դոլար), նախորդ տարվա 2244.0 մլրդ դրամի (4.9 մլրդ ԱՄՆ դոլարի) նկատմամբ: ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2006թ. կազմել է 827.4 հազար դրամ (1989 ԱՄՆ դոլար) նախորդ տարվա 697.4 հազար դրամի (1524 ԱՄՆ դոլարի) դիմաց:

- Նախորդ տարվա համեմատ արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը կազմել է 99.1%,

- գյուղատնտեսության համախառն արտադրանքինը՝ 100.4 %,

- շինարարության ծավալինը՝ 137.1%,

- մանրածախ առևտրի շրջանառությանը՝ 110.5 %,

- ծառայությունների ծավալինը՝ 120.3 %,

- արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 3198.3 մլն. ԱՄՆ դոլար և նախորդ տարվա նկատմամբ աճել 15.2 %-ով: Այդ թվում, արտահանումը՝ 1004.0 մլն. ԱՄՆ դոլար (աճը՝ 3.1 %), ներմուծումը՝ 2194.3 մլն. ԱՄՆ դոլար (աճը՝ 21.8%),

- միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 64001 դրամ և 2005թ. համեմատությամբ ավելացել 23.5%-ով (բյուջետային համակարգում՝ 45130 դրամ, աճը՝ 25.8 %, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում՝ 77883 դրամ, աճը՝ 21.2%),

- բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների մնացորդը 2006թ. տարեվերջին կազմել է 121921 մլն. դրամ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 96273 մլն. դրամի դիմաց (աճը կազմել է 26.6 %),

- 2005թ. նկատմամբ 2006թ.-ին սպառողական գների ինդեքսի ցուցանիշը կազմել է 102.9% (դեկտեմբերը դեկտեմբերի նկատմամբ՝ 105.2%),

- 2006թ. ԱՄՆ դոլարի միջին տարեկան հաշվարկային փոխարժեքը նվազել է 9.1%-ով և կազմել 416.04 դրամ, 2005թ. 457.69 դրամի դիմաց,

- 2006թ. պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակն ըստ նախնական տվյալների կազմել է 7.4%, 2005թ. 8.2%-ի դիմաց:

- 2006թ. Հայաստան այցելած միջազգային զբոսաշրջիկների թվաքանակն ըստ նախնական տվյալների ամփոփման, կազմել է 381.1 հազար նախորդ տարվա 318.6 հազարի դիմաց (աճը՝ 19.6%), իսկ զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 329.4 հազար մարդ (աճը՝ 22.6%):

- 2006թ. արձանագրվել է տարափոխիկ հիվանդությունների 103185 դեպք, 2005թ. 144510 դեպքի դիմաց:

- 2006թ. գրանցված հանցագործությունների ընդհանուր քանակը կազմել է 9757, 2005թ. 8875-ի դիմաց:

- 2006թ. բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ իրականացված օտարման գործարքների քանակը կազմել է 19261, 2005թ-ի 17238-ի դիմաց, իսկ բնակելի տների հիմնը կազմել է 6892, 2005թ-ի 6030-ի դիմաց:

- 2006թ., անշարժ գույքի նկատմամբ հանրապետությունում իրականացվել է 51284 օտարման գործարք, 2005թ-ի 42671 գործարքի դիմաց:

Ձեկույցը ներառում է նաև «Մեթոդաբանական պարզաբանումներ» հավելվածը, որում հակիրճ ներկայացվում են հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների բնութագրերը, հաշվարկման մեթոդաբանությունը: Բացի այդ, ներկայացված են «ԱՊՀ երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների միջազգային համադրումներ» և «Հետաքրքրաշարժ վիճակագրություն» հավելվածները:

Ձեկույցը պարունակում է նաև 2006թ. ընթացքում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության փաստացի հրապարակումների ամբողջական ցանկը:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը հասանելի է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության բաց գրադարանում (721 սենյակ) և ինտերնետային էջից՝ <http://www.armstat.am> հասցեով:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի *հետագա թողարկումներում* արտադրական եղանակով հաշվարկված համախառն ներքին արդյունքի ցուցանիշը (ՀՆԱ) *կիրառարակվի միայն ըստ Եվրոպական հաշիվների համակարգ 95 (Ե-77 95) ձեռնարկով տրվող խմբավորումների ձևաչափերի*. Ա3 և Ա6՝ ամսական պարբերականությամբ, իսկ Ա17՝ եռամսյակային պարբերականությամբ, պայմանավորված այն հանգամանքով, որ ՀՀ ԱՎԾ-ն ավարտել է անցումը Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին (ՏԳՏԴ՝ մշակված Եվրամիության նույնանման NACE Rev.1 դասակարգչի հիման վրա):